Հավելված N 1
ՀՀ կառավարության 2025 թվականի
դեկտեմբերի 25-ի N 1959 - Լ որոշման

ՂԱՐԱԲԱՂԻՑ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՌԱՆՁԻՆ ԽՄԲԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆՈՎ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱՐ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՄԱՍՆԱԿԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄԸ

1. Սույն միջոցառման նպատակն է կացարանի վարձակալության վարձավճարի մասնակի հատուցման եղանակով սոցիալական աջակցություն տրամադրել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի մայիսի 16-ի N 710-Լ որոշման (այսուհետ՝ որոշում) N 1 հավելվածի 5-րդ կետով, 10-րդ կետի 1-ին ենթակետով և սույն հավելվածի 2-րդ կետով սահմանված պայմաններին բավարարող այն ընտանիքներին, որոնք չեն ցանկացել օգտվել որոշմամբ հաստատված ծրագրից (այսուհետ՝ շահառու):

2. Սահմանել, որ սույն որոշման իմաստով շահառու է համարվում 1-3 անդամներ ունեցող այն ընտանիքը,

1) որը, որպես կացարանով ապահովման իրավունք ունեցող ընտանիք, օրենսդրությամբ սահմանված կարգով հաշվառված է պետական սոցիալական աջակցության ծրագրերի շրջանակում պետական սոցիալական բնակարանային ֆոնդում կացարանով ապահովման հերթացուցակում.

2) որի որևէ անդամը որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակում չի ստացել բնակարանի կամ կառուցվող շենքից բնակարան գնելու իրավունքի կամ անհատական բնակելի տան ձեռքբերման կամ անհատական բնակելի տան կառուցման հավաստագիր կամ չեղարկել է այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 14-ի N 898-Լ որոշման հավելվածի 3-րդ կետի 18-րդ ենթակետով սահմանված կարգով.

3) որի՝

ա. անդամները միայն անժամկետ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ անժամկետ ֆունկցիոնալության սահմանափակման խորը կամ ծանր աստիճան ունեցող կամ 60 ավելի տարեկան անձինք են, կամ

բ. անդամների տարիքների հանրագումարը 115 և ավելի է՝ 2 անդամի դեպքում, կամ

գ. անդամների տարիքների հանրագումարը 175 և ավելի է՝ 3 անդամի դեպքում:

3. Սույն միջոցառման շրջանակում սոցիալական աջակցությունը տրամադրվում է 120 ամիսների ընթացքում:

4. Սոցիալական աջակցության ամսական չափը ընտանիքի յուրաքանչյուր անդամի համար կազմում է 40000 դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

26.12.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ